



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ե. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 20 » 11 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 94

**Ձեռնարկողը՝**

**<<Գեոոեյդ>> ՓԲԸ**  
Ք. Երևան, Հր. Քոչարի 82, քն.16

**Գործունեությունը՝**

**Սալվարդ սարի հյուսիս-արևելյան լանջի 2018-2021թթ.  
ընթացքում կադարվելիք երկրաբանաորոնողական  
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ**  
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 94

<<20>> 11 2018թ.

**Սյունիքի մարզի Սալվարդ սարի հյուսիս-արևելյան լանջի 2018-2021թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանաորոնողական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

<<ԳԵՈՌԵՅԴ>> ՓԲԸ

Փաստաթղթի տեսակը՝

երկրաբանական ուսումնասիրության  
նախնական գնահատման  
հայտ /Գ կատեգորիա/

2018-2021թթ. ընթացքում իրականացվող որոնողագնահատման աշխատանքային ծրագիրը կազմվել է <<ԳԵՈՌԵՅԴ>> ՓԲԸ-ի նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցներով: Գնահատման հայտով նախատեսվում է Սյունիքի մարզի Սալվարդ սարի հյուսիս-արևելյան լանջի տարածքում կատարել ընդերքի երկրաբանական որոնողագնահատման և ուսումնասիրության աշխատանքներ, որի միջոցով հնարավոր կլինի գնահատել տեղամասի ոսկեբերությունը և ուղեկցող էլեմենտների առկայությունը, կատարված աշխատանքների արդյունքների հիման վրա հետախուզական աշխատանքների հետագա կազմակերպման նպատակահարմարությունը:

Սյունիքի մարզի Սալվարդ սարի հյուսիս-արևելյան լանջի ոսկու և նրան ուղեկցող մետաղների երկրաբանաորոնողական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակվել է նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի հնարավոր բացասական ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու նպատակով:

Որոնողական աշխատանքների տարածքը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան համայնքում՝ Մուցք, Շաղատ, Բռնակոթ, և Սալվարդ գյուղերի ադմինիստրատիվ տարածքում, Սալվարդ սարի հյուսիս-արևելյան լանջին, Սիսիան քաղաքից 28 կմ արևմուտք:

Տարածքով հոսում են Որոտան գետի ավազանի վտակներ՝ Շաղատ, Արգիլի, Գիժ և Հարամ գետերը: Հայցվող տարածքը նշված գետերից գտնվում է 2-8 կմ հեռավորությունների վրա:

Շրջանը մտնում է, ըստ Ռիխտերի 12 բալանոց սանդղակի, 7-8 բալանոց սեյսմիկ գոտու մեջ, բացարձակ բարձրությունը տատանվում է 1900-3000 մ-ի սահմաններում: Ունի չոր ցամաքային, լեռնատափաստանային կլիմա՝ երկարատև ձմռան և կարճ ամռան ամիսներով: Տեղումների միջին քանակը կազմում է 500-600 մմ, ամենացածր



ջերմաստիճանը դիտվում է հունվար ամսին՝  $-10^{\circ}\text{C}$ -ից  $-12^{\circ}\text{C}$ , ամենաբարձրը հուլիսին՝  $+16^{\circ}\text{C}$ -ից մինչև  $+18^{\circ}\text{C}$ :

Տարածքը ծածկված է անդեզիտներով, անդեզիտային պորֆիրիտներով, դիատոմիտային կավերով, մանրախճաքարային-կավային բերվածքներով: Տարածաշրջանին բնորոշ է բարդ երկրաբանական կառուցվածքը՝ օժտված յուրահատուկ մետաղական առանձնահատկություններով:

Բնակիչները զբաղված են անասնապահությամբ և հողագործությամբ: Տարածաշրջանում գործող ՀԷԿ-երը շրջանն ապահովում են էլեկտրական էներգիայով:

Որոնողագնահատողական աշխատանքների տարածքը կազմում է 8 քառ.կմ: Այստեղ առանձնացվում են բազմամետաղային և պղինձ-պիրիտային հանքայնացումները, որոնք կապված են ոսկու հանքայնացման հետ: Դաշտային աշխատանքների կատարման համար օգտագործվելու են նախկինում գոյություն ունեցող ճանապարհները: Նախատեսվող գործունեության իրականացման տարածքում չկան սողանքային երևույթներ, պետության կողմից պահպանվող հատուկ տարածքներ, պատմամշակութային հուշարձաններ, անտառային տարածքներ:

Երկրաբանական ուսումնասիրության կատարման տարածքում զարգացած են լեռնամարգագետնային, ճիմային, մարգագետնատափաստանային, սևահողանման, թույլ գորշավուն և տիպիկ գորշ-մոխրավուն հողերը: Սևահողերն ունեն սահմանափակ տարածում: Բուսական ծածկույթին բնորոշ են բարձրալայան, ենթալայան, տափաստանային բուսատեսակները, իսկ կենդանական աշխարհին լեռնատափաստանային գոտու ֆաունան՝ միատարր և աղքատ:

Համաձայն գնահատման հայտի՝ հայցվող տարածքում չի նախատեսվում ծանր փորվածքների անցում (բովանգքեր) և հորատանցքերի հորատում (հետախուզաառուներ, հետախուզահորեր, խրամուղիներ): Որոնողական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաֆիզիկական անոմալիաների միջոցով, որոնց արդյունքում առանձնացվելու են առավել հետաքրքիր տեղամասերը: Կատարվելու են հետևյալ աշխատանքները՝ 1:10000 մասշտաբի երկրաբանական քարտեզահանում (800 հ.ա.):

Երկրաֆիզիկական հանույթ.

ա) բլեռացման (IP) մեթոդով էլեկտրահետազոտում՝ 84գծ/կմ,

բ) մագնիտահետազոտում՝ 84 գծ/կմ,

գ) պետրոգրաֆիական նմուշարկում (840 նմուշ):

ե/ հաշվետվության կազմում:

Աշխատանքների կատարման ժամկետներն են.

- աշխատանքների սկիզբը՝ 2018թ. 4-րդ եռամսյակ,

- աշխատանքների ավարտը՝ 2021թ. 4-րդ եռամսյակ:

Ուսումնասիրման տարածքում խոշորաբեկոր և պետրոգրաֆիական նմուշարկումները կատարվելու են բնական մերկացումներից՝ հողի մակերևույթի արտաքին շերտից: Հետախուզման նման եղանակը շրջակա միջավայրի վրա կունենա թույլ ազդեցություն՝ ցածր և կարճ:

Նախատեսվող գործունեության տարածքում չկան հատուկ պահպանվող տեսակների աճելու և ապրելու վայրեր, կարմիր գրքի բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչներ:

Հետախուզական աշխատանքների ընթացքում հողային աշխատանքներ չեն նախատեսվում, հետևաբար հողային շերտի խախտում և թափոնակույտերի առաջացում, լրացուցիչ տարածքների ընդգրկում, նոր ճանապարհների կառուցում չեն նախատեսվում:



Երկրաֆիզիկական հանույթի նախատեսվող երթուղիները նախօրոք անցկացվելու են երկրաբանական քարտեզի վրա: Երկրաբանական քարտեզագրման համար երթուղիների միջև եղած հեռավորությունը ընտրվել է 100մ, դիտարկման կետերի հեռավորությունը 100մ: Տրանսպորտային միջոցներով փոխադրումները նախատեսվում է կատարել Տոյոտա և Նիվա մակնիշի ավտոմեքենաներով:

Հայտում նախատեսված են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- տարածքում և ավտոճանապարհների վրա մթնոլորտային օդի աղտոտվածության պարբերաբար հսկողության սահմանում,

- փոշենստեցման նպատակով ճանապարհների վրա ջրցանման աշխատանքների կատարում,

- օգտագործվող տրանսպորտային միջոցների պահպանում (սարքին վիճակում), արտանետման խողովակների վրա զտիչների տեղադրում,

- հողի աղտոտումը կանխելու նպատակով տարեկան երկու անգամ հողերի նմուշարկման իրականացում:

**Եզրահանգումներ.** Ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր, տեղային, թույլատրելի նորմերի սահմաններում: Նախատեսված են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք կնվազեցնեն գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա:

Փորձաքննության ընթացքում նախագիծը 01.10.18թ թիվ ՌՌ-32/657 գրությամբ ուղարկվել է լրամշակման, որտեղ հաշվի են առնվել փորձաքննության կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հասարակական լսումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

### Փորձաքննական պահանջ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է շրջանցել այն տարածքները, որտեղ կհանդիպեն կենդանիների, սողունների, թռչունների ձվադրման, բնադրման վայրեր:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Գեոռեյդ>> ՓԲԸ-ի Սյունիքի մարզի Սալվարդ սարի հյուսիս-արևելյան լանջի 2018-2021թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանաորոնողական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝

Գլխավոր մասնագետ՝



Ա. Դոնոյան

Թ. Նուրիջանյան